կապիտալ
ասեթ
մենեջմենթ

Հաստատված է
«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի
Տնօրենների խորհրդի կողմից
2022 թվականի հոկտեմբերի 28-ին

Խորհրդի նախագահ _____

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(նոր խմբագրությամբ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոն 1-1.Կանոնակարգը: Անվանումը

(ա) Սույն Կանոնակարգը ներառում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության պահանջները, չափանիշները, մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը, մրցույթների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը՝ դրանց կոդիֆիկացման նպատակով:

(բ) Սույն Կանոնակարգի անվանումն է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության Աուդիտորական կազմակերպության ընտրության կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Կանոնակարգ»:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կոդիֆիկացիան և հղումները

(ա) Սույն Կանոնակարգը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Գլուխ 1. «Ընդհանուր դրույթներ», Գլուխ 2. «Աուդիտորական կազմակերպության ընտրությանը ներկայացվող պահանջները և չափանիշները», Գլուխ 3. «Աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը», ինչպես նաև Հավելվածից՝ «Աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի չափանիշներ»:

(բ) Գլուխները համարակալվում են արաբական թվերով:

(գ) Վերնագրերը միավորում են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:

(դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2.1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):

(ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝

(1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն).

(2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2))

(3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)):

(զ) Սույն Կանոնակարգում Հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝

(1) Վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները.

(2) Այլ կանոնի ենթականոնին, կետին կամ ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «2-3(բ)(5)(Ա) կանոնի համաձայն» հղումը նշանակում է «2-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետ».

(3) Եթե հղում է կատարվում նույն կանոնի ենթականոնին, կետին կամ ենթակետին, կամ նույն ենթականոնի կետին կամ ենթակետին, կամ նույն կետի ենթակետին, ապա հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) Ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետ».

(4) Սույն Կանոնակարգի որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «սույն Կանոնակարգի» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին.

(5) Որևէ ձևին կամ աղյուսակին հղում ենթադրում է Կանոնակարգի Հավելվածում ներառված տվյալ ձևը կամ աղյուսակը:

Կանոն 1-3. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

(ա) Սույն Կանոնակարգը, դրա փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդի կողմից դրանք հաստատելու օրը:

(բ) Սույն Կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդի որոշմամբ:

(գ) Սույն Կանոնակարգի ուժի մեջ մտնելով՝ ուժը կորցրած է ճանաչվում 2012թ. հոկտեմբերի 24-ին «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության խորհրդի կողմից հաստատված «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության Արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության կանոնակարգը:

Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

(ա) Սույն Կանոնակարգը ներքին իրավական ակտ է և ընդունվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածը:

(բ) Սույն Կանոնակարգի գործողությունը տարածվում է նաև «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կառավարման ներքո գտնվող ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի վրա:

Կանոն 1-5. Հասկացություններ

Սույն Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

Ընկերություն.	«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն, ինչպես նաև վերջինիս կառավարման ներքո գտնվող ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր.
Մասնագիտացված կառույց.	Հայաստանի Հանրապետության աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ.
Աուդիտորական կազմակերպություն.	մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող իրավաբանական անձ, որն իրավունք ունի մատուցելու աուդիտորական ծառայություններ.
Պատասխանատու աուդիտոր.	մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի աուդիտորի որակավորում և աուդիտորական կազմակերպության անունից ստորագրում է աուդիտորական եզրակացությունը.
Աուդիտորական խումբ.	աուդիտորական կազմակերպության աշխատակիցներ, ովքեր անմիջականորեն ընդգրկված են Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ.
Աուդիտի հանձնաժողով.	Ընկերության խորհրդին կից աուդիտի հանձաժողով, որն ի լրումն այլ գործառույթների իրականացնում է նաև Ընկերության ֆինանսատնտեսական

	գործունեության աուդիտն իրականացնող թեկնածուի ընտրություն.
Ֆինանսական կազմակերպություն.	բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ:

ԳԼՈՒԽ 2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կանոն 2-1. Աուդիտորական կազմակերպության ընտրության տեխնիկական և ֆինանսական չափանիշները

(ա) Ընկերությունն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.

1) Ունի ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

2) Պատասխանատու աուդիտորն ունի ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

3) Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

(բ) Ընկերության և աուդիտորական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 3 տարի ժամկետով: Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել Ընկերության աուդիտը առավելագույնը 3 տարի: Աուդիտորական կազմակերպությունը սույն կետում նշված 6 տարի անընդմեջ աուդիտ իրականացնելուց հետո չի կարող իրականացնել Ընկերության աուդիտը առնվազն 3 տարի:

(գ) Աուդիտորական կազմակերպության հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի հրավերով աուդիտորական կազմակերպությունը Ընկերության հետ պետք է մասնակցի արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

(դ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի անդամ /ղեկավար/ չի կարող լինել Ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ ղեկավարը և աշխատակիցը, Ընկերության ներքին աուդիտի անդամը և ղեկավարը, ինչպես նաև Ընկերության, դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:

(ե) Աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև Ընկերության և տվյալ աուդիտորական կազմակերպության միջև առկա համագործակցության փորձը, մասնավորապես՝ նախկինում վերջինիս կողմից

Ընկերությանը մատուցած աուդիտորական ծառայության որակը:

(զ) Ընկերությունն աուդիտորական կազմակերպության ընտրության համար սահմանում է հետևյալ պայմանները՝

(1) աուդիտի ընդգրկման բնագավառները,
(2) աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,
(3) աուդիտի իրականացման արժեքը,
(4) այլ պայմաններ՝ Ընկերության հայեցողությամբ, պարտադիր մրցույթի մասնակիցների համար:

Կանոն 2-2. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը

(ա) Ընկերությունը, հիմնվելով Կանոնակարգի թիվ 1 Հավելվածով սահմանված չափանիշների վրա, ուսումնասիրում է աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները և գնահատում դրանք՝ նախապատվությունը տալով ամենաբարձր միավորներ հավաքած աուդիտորական կազմակերպությանը:

ԳԼՈՒԽ 3. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կանոն 3-1. Աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը

(ա) Ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով:

(բ) Աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը պետք է հրապարակվի անցկացման ամսաթվից առնվազն 10 օր առաջ՝ նվազագույնը Ընկերության ինտերնետային կայքում: Ի լրումն դրա, Ընկերությունը կարող է նաև մրցույթին մասնակցելու հրավեր ուղարկել առնվազն երեք աուդիտորական կազմակերպությունների, որոնք Ընկերության աուդիտի հանձնաժողովի գնահատմամբ կարող են ավելի լավ բավարարել սույն Կանոնակարգի պահանջներին:

(գ) Աուդիտորական կազմակերպության ընտրության վերաբերյալ հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

(1) մրցույթի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը,
(2) մրցույթի կայացման վայրն ու հասցեն,
(3) մրցույթի անցկացման և հաղթողին որոշելու կարգը,
(4) մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
(5) մրցութային առաջարկությունների ընդունման վերջնաժամկետը,
(6) այլ էական պայմանները:

(դ) Եթե հայտարարությամբ սահմանված՝ մրցութային առաջարկությունների ներկայացման վերջնաժամկետին Ընկերությունը չի ստացել որևէ առաջարկություն, ապա Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ մրցույթի անցկացման օրը հետաձգվում է ևս 10 օրով: Այդ որոշման հիման վրա հայտարարությունը թարմացվում է:

Կանոն 3-2. Մրցույթի անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամկետները

(ա) Մրցույթի անցկացման արդյունքներով աուդիտի հանձնաժողովը որոշում է Ընկերության աուդիտն իրականացնող թեկնածու կազմակերպությանը: Աուդիտի հանձնաժողովի որոշած կազմակերպության թեկնածությունը այնուհետև ներկայացվում է Ընկերության խորհրդին և բաժնետերերի ժողովին:

(բ) Ընկերությունում աուդիտի հանձնաժողով ձևավորված չլինելու դեպքում սույն

Կանոնակարգով սահմանված աուդիտի հանձնաժողովի լիազորությունները կատարում է Ընկերության խորհուրդը:

(գ) Աուդիտորական կազմակերպությունները մրցույթի առաջարկությունները ներկայացնում են երկու ծրարով, որոնցից առաջինում ներկայացվում է աուդիտորական ծառայության տեխնիկական, իսկ երկրորդում՝ ֆինանսական չափանիշների վերաբերյալ տեղեկատվությունը:

(դ) Մրցույթի առաջարկությունները Ընկերություն կարող են ներկայացվել փոստով, առձեռն կամ էլեկտրոնային փոստով: Փոստով կամ առձեռն ներկայացնելու դեպքում հայտերը պետք է լինեն փակ կնքված կամ ստորագրված ծրարով: Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտը կարող են փոփոխել կամ հետ վերցնել առաջարկությունը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ հայտի վերևի աջ անկյունում նշելով «փոփոխում» բառը:

(ե) Մրցույթի անցկացումը և արդյունքների ամփոփումը կատարում է աուդիտի հանձնաժողովը: Մրցույթի արդյունքների ամփոփման ժամկետը չի կարող գերազանցել երկու շաբաթը:

(զ) Մրցույթի անցկացման օրն առաջինը բացվում է տեխնիկական չափանիշների վերաբերյալ առաջարկությունների ծրարը:

(է) Այն դեպքում, երբ առաջին ծրարում ներկայացված առաջարկը ամբողջական է, բացվում է երկրորդ ծրարը և գնահատվում են առաջարկի ֆինանսական չափանիշները՝ թիվ 1 Հավելվածով սահմանված ֆինանսական չափանիշների համաձայն, հակառակ դեպքում՝ այն չի բացվում և ներկայացված առաջարկությունը համարվում է մերժված:

(թ) Մրցութային առաջարկի երկրորդ ծրարը բացելուց հետո գնահատվում է առաջարկն ամբողջությամբ՝ ըստ թիվ 1 Հավելվածի:

(ժա) Ամփոփելով մրցույթի արդյունքները՝ աուդիտի հանձնաժողովը կայացնում է որոշում մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուի վերաբերյալ: Աուդիտի հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Արձանագրության մեջ նկարագրվում են մրցույթի առաջարկները, գնահատականներն՝ ըստ թիվ 1 Հավելվածի, ներկայացվում են քննարկման արդյունքները, աուդիտի հանձնաժողովի կողմից կայացված որոշումը և այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրվում է աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

(ժբ) Եթե մրցույթի արդյունքում ոչ մի կազմակերպություն չի բավարարում թիվ 1 Հավելվածում սահմանված չափանիշները, աուդիտի հանձնաժողովի կազմված արձանագրության հիման վրա և Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ հայտարարվում է նոր մրցույթ:

(ժգ) Աուդիտի հանձնաժողովի որոշումը ներկայացվում է Ընկերության խորհրդին՝ «Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը» օրակարգով բաժնետերերի ընդհանուր ժողով հրավիրելու և աուդիտն իրականացնող անձի տարեկան վարձատրության չափը որոշելու համար:

(ժդ) Բաժնետերերի ժողովը հաստատում է արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպությանը և հանձնարարում է կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր:

(ժե) Բաժնետերերի ժողովի կողմից մրցույթում հաղթած կազմակերպության թեկնածությունը չհաստատվելու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ:

Հավելված 1. Աուդիտորական կազմակերպության ընտրության չափանիշներ

	Չափանիշ	Միավոր	Կշիռ %	Ընդամենը	Մեկնաբանություններ (գնահատվում է եռաստիճան սանդղակով՝ 0-3 միավոր)
Տեխնիկական չափանիշներ	Տվյալ աուդիտորական կազմակերպության կողմից նախորդ տարում սպասարկված ՀՀ ֆինանսական կազմակերպությունների քանակը		100		• 0 ֆինանսական կազմակերպություն – 0 • մինչև 4 կազմակերպություն – 1 • 5-7 կազմակերպություն – 2 • 8 կազմակերպություն և ավելի – 3
	Տվյալ աուդիտորական կազմակերպության ՀՀ-ում և/կամ միջազգային ճանաչումը (հեղինակությունը)		90		• աշխատում է միայն ՀՀ-ում – 0 • իրականացնում է միջազգային գործունեություն, սակայն միջազգային ռեյտինգավորմամբ լավագույն տասնյակում չէ – 1 • միջազգային ռեյտինգավորմամբ ընդգրկված է լավագույն տասնյակում – 2
	Տվյալ աուդիտորական խմբի կուտակային աշխատանքային փորձը ֆինանսական կազմակերպությունների աուդիտի ոլորտում		80		• 3-5 տարի – 1 • 5-7 տարի – 2 • 7 տարի և ավել – 3
	Աուդիտի անցկացման ժամկետները՝ առաջին այցելությունից մինչև վերջնական եզրակացության ներկայացումը		60		• 4 ամսից ավելի – 0 • 3-ից 4 ամիս – 1 • 2-ից 3 ամիս – 2
	Տվյալ աուդիտորական կազմակերպության հետ համագործակցության փորձը		70		• համագործակցության բացակայություն – 0 • 1 ֆինանսական տարվա աուդիտ – 1
	Աուդիտորակն կազմակերպության տեխնիկական առաջարկում աուդիտի պլանի վերաբերյալ տեղեկատվություն		70		• տեղեկատվության բացակայություն – 0 • աուդիտի պլանի առկայություն – 1 • դետալացված և հիմնավորված աուդիտի պլանի առկայություն - 2
	Աշխատանքների ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրումը՝ ռիսկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով		70		• դրույթի բացակայությունը – 0 • մասնակի բավարարման դրույթի առկայությունը – 1 • ամբողջական բավարարման դրույթի առկայությունը – 2
	Ընդամենը միավորներն՝ ըստ տեխնիկական չափանիշների	X	X		
Ֆինանսական չափանիշներ	Աուդիտի ծառայության արժեքը		100		• ամենաբարձր արժեքը – 0 • 2-րդ բարձր արժեքը – 1 • 3-րդ և ավելի ցածր արժեքները – 2
	Աուդիտի ծառայության արժեքից կանխավճարի վճարման դրույթի առկայությունը պայմանագրում		50		• 51% և ավելի – 0 • 31-50% – 1 • մինչև 30% – 2
Ընդամենը միավորներ՝ ըստ ֆինանսական չափանիշների					
Վերջնական միավոր					